



*Համարը N 927-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2011.07.20/44(847) Հոդ.1069
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 21.07.2011*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 30.06.2011
Ստորագրման ամսաթիվը 12.07.2011
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՍՏ ՀՀ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ՝ ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՋՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹՈՂՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2011 թվականի N 927-Ն

ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ՝ ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՋՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹՈՂՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել՝
 - 1) բնապահպանական թողքերի գնահատումը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի գնահատումը՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 3) խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի նորմերը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Սույն որոշման NN 2 և 3 հավելվածներով սահմանված խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի գնահատումը և նորմերը կիրառվում են նոր ջրօգտագործման թույլտվությունների դեպքում:
3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ սույն որոշման հավելվածներով սահմանված գնահատումները հաշվի առնել ջրային ռեսուրսների էկոլոգիական հավասարակշռված վիճակի ապահովման, ջրի ազգային պաշարի պահպանման և կառավարումն արդյունավետ կազմակերպելու համար:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի «Էկոլոգիական թողքերի և մակերևութային հոսքի հատվածում յուրաքանչյուր ջրային ռեսուրսի կարգը հաստատելու մասին» N 592-Ն որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2011 թ. հուլիսի 12
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 927-Ն որոշման

Գ Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ

ԲՆԱԿԱՆԱԿԱՆ ԹՈՂՔԵՐԻ

1. Սույն գնահատմամբ սահմանվում է բնապահպանական թողքերի մեծությունների սահմանման մեթոդիկան:
2. Յուրաքանչյուր ջրավազանային տարածքի համար բնապահպանական թողքի մեծությունը սահմանվում է առանձին՝ հաշվի առնելով նշված մեթոդիկան և տվյալ գետավազանի հիդրոմորֆոլոգիական, հիդրոաշխարհագրական, հիդրոքիմիական, հիդրոֆիզիկական, բնապահպանական ու այլ առանձնահատկությունները և ներառվում ջրավազանային կառավարման պլաններում:
3. Որպես բնապահպանական թողքի մեծություն ընդունվում է ջրի էլքի այնպիսի մեծություն, որի դեպքում գետն արդեն գործել է բնական պայմաններում:
4. Բնապահպանական թողքի մեծությունը հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել գետի հիդրոլոգիական ռեժիմը, աշխարհագրական գոտին, որում այն գտնվում է, նրա տնտեսական օգտագործման ձևը և աստիճանը, ջրի քանակական և որակական կազմը և այլ գործոններ: Ուսումնասիրված գետավազանների ներկայումս գործող հիդրոլոգիական դիտակետերի համար բնապահպանական թողքի արժեքը որոշելիս որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն էլքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին էլքը:
5. Չուսումնասիրված գետերի և գետավազանների համար նվազագույն էլքերի վերաբերյալ տվյալների բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտվել հիդրոլոգիական ատլասում պատկերված բազմամյա ձմեռային ժամանակաշրջանում առավել նվազագույն էլքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի հոսքի մոդուլների քարտեզից՝ դուրս բերելով հոսքի միջին մոդուլի արժեքը (լ/վ.կմ²):
6. Այնուհետև որոշվում է տվյալ գետավազանի հիդրոլոգիական դիտակետերի համար նվազագույն հոսքի միջին մոդուլի արժեքը՝ հետևյալ բանաձևով՝

$$M_{\text{միջ}} = (f_1 m_1 + f_2 m_2 + \dots + f_n m_n) / F, \quad (1)$$

որտեղ՝ $M_{\text{միջ}}$ -ը տվյալ մակերեսի նվազագույն 10 օրերի միջին մոդուլն է, լ/վ.կմ², f_i -ն երկու հարևան իզոգծերի միջև ընկած մակերեսն է (կմ²), m_i -ը երկու հարևան իզոգծերին համապատասխանող մոդուլների կիսագումարն է (լ/վ.կմ²), F -ը այդ մակերեսների ընդհանուր գումարն է ($f_1 + f_2 + \dots + f_n$) (կմ²):

Համակարգով աշխատելիս ԱրկԳԻս-ում մոդելավորվում է (1) բանաձևը, որի արդյունքում ավտոմատ կերպով ստացվում է ուսումնասիրվող գետավազանի յուրաքանչյուր դիտակետի համար նվազագույն 10 օրվա հոսքի մոդուլի միջին արժեքը:

7. Հոսքի նվազագույն մոդուլի արժեքից (լ/վ.կմ²) կատարվում է անցում հոսքի նվազագույն էլքի արժեքին (մ³/վ) հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{միջ}} = M_{\text{միջ}} F/1000, \quad (2)$$

որտեղ՝ $Q_{\text{միջ}}$ -ը տվյալ դիտակետում գետային հոսքի նվազագույն էկոլոգիական էլքն է (մ³/վ), $M_{\text{միջ}}$ -ը տվյալ դիտակետի համար հաշվարկված նվազագույն 10 օրերի հոսքի միջին մոդուլն է (լ/վ.կմ²), F -ը մինչև տվյալ դիտակետն ընկած ջրհավաք ավազանի մակերեսն է (կմ²):

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 927-Ն որոշման

Գ Ն Ա Հ Ա Տ ՈՒ Մ

ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ

1. Սույն գնահատմամբ սահմանվում է խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի սահմանման մեթոդիկան:

2. Յուրաքանչյուր ջրավազանային տարածքի և բնակավայրի համար խմելու-կենցաղային նպատակով ջրի պահանջարկի մեծությունը սահմանվում է առանձին՝ հաշվի առնելով նշված մեթոդիկան և տվյալ գետավազանի հիդրոմոնոֆոնոգիական, հիդրոաշխարհագրական, հիդրոքիմիական, հիդրոֆիզիկական, բնապահպանական ու այլ առանձնահատկությունները, ինչպես նաև բնակավայրի ջրամատակարարման տեսակն ու սոցիալական զարգացման միտումները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման N 3 հավելվածում նշված նորմերը:

3. Տվյալ բնակավայրի համար ջրի պահանջարկը խմելու-կենցաղային նպատակով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q=Nq_{\text{մ}} K_{\text{ժամ}} K_{\text{օր}} K_{\text{ջկ}}$$

որտեղ՝ N-ը բնակչության թիվն է, $q_{\text{մ}}$ -ը՝ ջրօգտագործման միջին օրական նորման, $K_{\text{օր}}$ -ը՝ օրական անհավասարաչափության գործակիցը, $K_{\text{ժամ}}$ -ը՝ մեկ ժամվա անհավասարաչափության գործակիցը, իսկ $K_{\text{ջկ}}$ -ն՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից նախատեսված տվյալ ջրամատակարարման համակարգի ջրակորստի գործակիցը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 927-Ն որոշման

Ն Ո Ր Մ Ե Ր

ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՋՐԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ

Ջրամատակարարման տեսակները	Ջրօգտագործման միջին օրական նորմն ըստ 1 բնակչի, լիտրով	Անհավասարաչափության գործակիցը	
		1,05-1,09	1,20-1,25
Ջրագիծ, կոյուղի, կենտրոնական տաք ջրամատակարարում	200-400	1,05-1,09	1,20-1,25
Ջրագիծ, կոյուղի և գազատաքացուցիչներ	150-230	1,09-1,11	1,25-1,30

Առանց ջրագծի և կոյուղու	30-50	1,20-1,33	1,80-2,00
-------------------------	-------	-----------	-----------

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Ռ. Սարգսյան